



*Համարը N 133-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.02.28/13(537) Հոդ.279  
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.03.2007*

*Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 01.02.2007  
Ստորագրման ամսաթիվը 08.02.2007  
Վավերացման ամսաթիվը 15.02.2007  
Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶԱՐԴՈՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ՀԵՏ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
15 փետրվարի 2007 թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

1 փետրվարի 2007 թվականի N 133-Ն

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶԱՐԴՈՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ՀԵՏ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել թանկարժեք մետաղների ջարդոնների և թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքների մանրաձախ առուվաճառքի կարգը՝ կապված հարգորոշման և (կամ) հարգադրոշման հետ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2007 թ. փետրվարի 8  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
փետրվարի 1-ի N 133-Ն որոշման

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶԱՐԴՈՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱԾԱՌՔԻ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ՀԵՏ**

1. Սույն կարգով կարգավորվում է թանկարժեք մետաղների ջարդոնների և թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքը՝ կապված հարգորոշման և (կամ) հարգադրոշման հետ:

2. Սույն կարգում նշված հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով՝

**ա) թանկարժեք մետաղների ջարդոն (այսուհետ՝ ջարդոն)**՝ թանկարժեք մետաղների կտորներ՝ տարբեր ձևի և չափի, որոնք առաջացել են ոսկերչական իրերի մաշվածության կամ ձևախախտման արդյունքում, թանկարժեք մետաղներից պատրաստվող իրերի արտադրության ընթացքում առաջացած կտորներ, գնդիկներ, տաշեղներ, լաբորատոր ամանեղենի կտորներ, առանձին մասեր, տաշեղներ, գնդիկներ, ոչ նպատակային նշանակության և անօգտագործելի հանդիսացող թանկարժեք մետաղներից պատրաստված այլ իրեր, անընթեռնելի մետաղադրամներ և այլ նմանատիպ առարկաներ.

**բ) թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքներ (այսուհետ՝ նախապատրաստվածք)**՝ թանկարժեք մետաղներից պատրաստվող իրերի արտադրական գործընթացը չավարտված, իրերի վերջնական տեսք չստացած ձուլվածքներ, դրոշմվածքներ, գլանվածքներ, թիթեղներ՝ տարբեր ձևի և տեսքի, կռած և կոփած առարկաներ, որոնք պիտանի և անհրաժեշտ են որոշ արտադրական գործընթաց կատարելուց հետո պատրաստի իր ստանալու համար:

3. Ջարդոնները և նախապատրաստվածքները հարգորոշվում ու հարգադրոշմվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիա ունեցող անձանց (այսուհետ՝ լիցենզավորված անձ) կողմից՝ «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան:

4. Ջարդոնների և նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարգերով հարգադրոշմների առկայության դեպքում՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ կետով սահմանված դեպքի:

5. Այն ջարդոնների և նախապատրաստվածքների, որոնք հնարավոր չէ հարգադրոշմել՝ կախված իրենց կառուցվածքից և չափերից, մանրածախ առուվաճառքն իրականացվում է միայն հարգորոշումից հետո՝ փակ և կապարակնիքված տուփերով: Տուփը պետք է լինի այնպիսին, որպեսզի հնարավոր լինի այն բացել միայն կտրելու կամ կապարակնիքը վնասելու դեպքում: Կապարակնիքին պետք է ամրացված լինի մետաղյա թիթեղ (բայց ոչ երկաթյա), որի վրա պետք է գրված լինի «կապարակնիք» բառը, որից հետո պետք է նշված լինեն տուփում պարունակվող ջարդոնի և նախապատրաստվածքի հարգը հավաստող հարգադրոշմը, լիգատուրային քաշը, որը պետք է գրված լինի քերծվածքային տարբերակով, և այն լիցենզավորված անձի տարբերակիչը, որն իրականացրել է հարգորոշում:

6. Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարգերին և հարգադրոշմներին չհամապատասխանող հարգեր և հարգադրոշմներ ունեցող ջարդոնների ու նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքն իրականացվում է միայն հարգորոշումից և Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարգերով հարգադրոշմումից հետո:

7. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված ջարդոնների և նախապատրաստվածքների տուփի ու կապարակնիքի վնասված չլինելու պարագայում տուփում պարունակվող ջարդոնի և նախապատրաստվածքի կապարակնիքին ամրացված մետաղյա թիթեղի վրա նշված հարգին անհամապատասխանության դեպքում՝ լիցենզավորված անձն օրենքով սահմանված կարգով և չափով կրում է պատասխանատվություն:

8. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված ջարդոնների և նախապատրաստվածքների տուփի ու կապարակնիքի վնասված լինելու պարագայում տուփում պարունակվող ջարդոնի և նախապատրաստվածքի կապարակնիքին ամրացված մետաղյա թիթեղի վրա նշված հարգին անհամապատասխանության դեպքում՝ մանրածախ առուվաճառք իրականացնող անձն օրենքով սահմանված կարգով և չափով կրում է պատասխանատվություն:

9. Ջարդոնների և նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքի նկատմամբ վերահսկողությունը և ստուգումներն իրականացվում են օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**